

# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լուսաղբյուր համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Լուսաղբյուր	Ավագանու հերթական նիստ	28.02.2020թ.	15:00	համայնքի ղեկավարի աշխատասենյակում

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝



Ա. Հակոբյան

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ, ՀԵՂԻՆԵ ՏՈՆՈՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել 2019 թվականի Լուսաղբյուր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ  
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լուսաղբյուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 8-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ, 16.2-րդ կետերով հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի գինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2020 փետրվարի 18-ի թիվ 2 եզրակացությունը՝  
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից համայնքի նորածին երեխաների ծնողներից մեկին, համայնքի մահացած բնակիչների հարազատներին, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ  
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ